

#### IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2005թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ. ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում շարունակվել են տեղային համակարգչային ցանցի արդիականացման աշխատանքները: Ցանցին միացվել են գործող, տեխնիկական պահանջներին համապատասխանող բոլոր (թվով 160) համակարգիչները:

ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներում «Վինդոու-2000» սերվերի կառավարմամբ շահագործվում է դոմենային միջավայր, որն ապահովում է ցանցի կենտրոնացված կառավարում և ցանցի աշխատանքի բարձր հուսալիություն: Ներդրվել է դոմենային սերվերից կառավարվող հակավիրուսային փաթեթ: Կառուցվածքային ստորաբաժանումներում կատարվում է համակարգիչների հակավիրուսային ծրագրերի կառավարում և արդիականացում: Ներդրվել է ծրագրային փաթեթների ավտոմատ տեղակայման հնարավորություն:

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններում շարունակվել են տեղային համակարգչային ցանցերի ստեղծման և արդիականացման աշխատանքները: Արարատի և Արագածոտնի մարզային գործակալություններում ստեղծվել են տեղային համակարգչային ցանցեր: Շիրակի մարզային գործակալությունում տեղային համակարգչային ցանցը ընդլայնվել է:

ՀՀ ԱՎԾ Շիրակի, Արարատի և Արագածոտնի մարզային գործակալությունները միացվել են փոստային «Մեյլ»-սերվերին /Armstat.am/:

Մոդեմային կապը ընդլայնվել է 5 կետով՝ Արարատի մարզային գործակալության Վեդու և Մասիսի տարածքային ստորաբաժանումների հետ, Կոտայքի մարզային գործակալության Աբովյանի, Հրազդանի և Չարենցավանի տարածքային ստորաբաժանումների հետ :

Ինտերնետային կապի որակի բարձրացման նպատակով «National Summary Data Page» (<http://docs.armstat.am/nsdp>) բաժնի համար տեղակայվել է <http://docs.armstat.info/nsdp> հասցեով կայքի հայելային արտապատկերումը:

Շարունակվել են ՀՀ ԱՎԾ ինտերնետային պաշտոնական կայքի արդիականացման աշխատանքները: Կայքում ավելացվել է նոր բաժին՝ «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդ»: Ստեղծվել է նաև հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով նոր բաժին տարածքային վիճակագրության նյութերի համար, որոնք բաղկացած են բազմաթիվ քարտեզներից և մարզերի վերաբերյալ նյութերից:

Յուրաքանչյուր եռամսյակ լազերային սկավառակներով բոլոր մարզային (ներառյալ Երևանի քաղաքային) գործակալություններին տրամադրվում է վիճակագրական հրապարակումների բազան:

2005թ. ՀՀ ԱՎԾ ինտերնետային պաշտոնական կայքում տեղադրվել են 187 (ներառյալ նախորդ տարիների ՀՀ ԱՎԾ որոշ հրապարակումներ) հրապարակումներ:

Շարունակվել է Տվյալների Տարածման Հատուկ Ստանդարտի (ԷսԴԻԴԻԷս) տվյալների բազայի կառավարումը և իրականացվել են անհրաժեշտ փոփոխությունները:

ՀՀ ԱՎԾ-ի ինտրանետ-կայքում (<http://intranet/>) կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ և ստեղծվել նոր html-էջեր հետևյալ նյութերի համար՝ «Վարչատարածքային բաժանման միավորների դասակարգիչ», «Արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների», «Զբաղմունքների դասակարգիչ»:

ՀՀ ԱՎԾ-ում շահագործվում են 63 տվյալների բազաներ: 2005թ. վիճակագրական տարբեր ոլորտների տվյալների մշակման համար ստեղծվել են 8 նոր համալիրներ, կատարվել են փոփոխություններ գործող 30 համալիրների մեջ:

«ԷսԶյուԷլ-2000» սերվերի վրա վարվում է դասակարգիչների բազան, որը պարունակում է հետևյալ դասակարգիչներ՝ վարչատարածքային բաժանման, երկրների, կազմակերպա-իրավական ձևերի, տնտեսական գործունեության տեսակների (NACE, ISIC).

Շարունակվել են վիճակագրական տվյալների բազաների ստեղծման աշխատանքներ ASP.NET տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Վիճակագրական տվյալների հիմնապաշարների (Վերհատու) մշակման շրջանակում շարունակվել են կառուցվածքի մշակման և SERVERSQL սերվերում տեղադրման ֆակտ-աղուսյակների աշխատանքները: Մշակվում է ծրագիր, որի միջոցով կարելի է տեղեկատվությունը տեղափոխել տեղային տվյալների բազաներից ինֆորմացիոն վիճակագրական տվյալների հիմնապաշար:

Կատարվել են փոփոխություններ համալիրներում MYSQL սերվերում PHP տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Շարունակվել է ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության արխիվացումը:

Ստեղծվել են 50 քարտեզներ հրապարակումների համար, «Առք-Վյու-8» քարտեզագրական ծրագրային փաթեթի օգտագործմամբ: Մշակվել է ԱՏՀ (GIS) ծրագրային փաթեթի պարզեցված ուսումնական ձեռնարկ և ԱՎԾ-ի աշխատակիցների հետ անցկացվել է ԱՏՀ ծրագրային փաթեթի ուսուցում: